ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՂԱԿԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամերիկաի համար տարեկան 4 տոլար դրմ.
Եւրոպաի և այլ տեղերի համար տրկն. 20 Ֆրանկ
Տնօրէնութիւնն լինք կը վճարէ փոստի ծախքը։
Բաժնորդագրութիւնները կը սկսին ամսագլուխներէն (1 յուն. Տ.թ) և կանխիկ վճարելի են։ Վեցամսեայ և եռամսեայ բաժնորդագրութիւններ ալ կընդունուին, առանց ոևէ յաւելման բաժնեգնին վրայ։
Նամակ և ծրար պէտք է ղրկել հետևեալ հասցեով· M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia* MARSEILLE (France)

Գ ՏԱՐԻ ԹԻՒ 9

1887 ՍԵՊՏԵՄԲԵՐ 14

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2 (Հ.Տ.)

ՋՈՐՆԳՋԱԹՓ

Կը հրատարակուի Ն. Շրջ. օրեր

ՊԱՏՄԱՆԵՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։
Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները։
Յանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Յանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ· 1 գլխագիրը 2 սանդիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau dela Rédaction (Rue Vacon, 50)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ռուս կառավարութեան կրթական յետադիմութիւնը. — Պարսկաստանի Հայերը եւ իրենց զարթական ճիգերը ի Հընդկաստան եւայլն. — Ռումանիոյ եւ Պուլկարիոյ հայ Առաջնորդները. — Ի. Կ. Այվազովսկոյ Յարելեանը. — Ռափայէլ Պատկանեան. — Ասպետեանի Տիկին Զուլեղ. Նոր հրատարակութիւններ. — Պուլկարիա· — Արտասահմանի լուրեր· — Մահուանցմաներ. — Բանասիրական (Յովհ. Յովհաննհսեանի բանաստեղծութիւնները)

ՌՈՒՍՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՑԵՏԱԴԻՄՈՒԹԻՒՆԸ

Կովկասի Հայ լրագրներին մէջ կը կարդանք Ռուսիոյ ժողովրդական Լուսաւորութեան Նախարարի մի շրջաբերականը որով կը հրամայէ ընդունել Պրօգիմնազիօն և Գիմնազիօն կոչուած միջնակարգ ուսումնարաններին մէջ այն աշակերտները միայն որոնք այդ ուսումնարանները մտնել կարողանալու առաջին ուսում ապացուցած լինելէ զատ, հետեւեալ 2 պայմանների մէջ եւս կը գտնուին։ Առաջին՝ պէտք է որ հարուստի տղայ լինին որ ապահովութիւն լինի թէ իրենց ուսումնական պիտոյքները կը հոգայանին։ Երկրորդ, պէտք է գոհացուցիչ երաշխաւորութիւն ներկայացնեն թէ իրենց ծնողների և պաշտպանների նիւթական և տնային բարոյական կացութիւնը լաւ պայմաններու մէջ է, այնպէս որ յայտնի լինի թէ պիտի կարողանան ապագայի մէջ, ուսման մասին հարկ եղած յաջողութեամբն հանդերձ, բարերարոյ և կառավարութեան վստահութեանն արժանի անձեր դառնալ։ Այդ վարժարաններ ընդունուելու համար աշակերտներուն տարեկան վճարքն ալ մինչեւ 40 ռուբլու բարձրացած է։

«Այս միջոցներով, կասէ Հանրային լուսաւորութեան նախարարի շրջաբերականը, գիմնազիօններըը և պրօգիմնազիօնները կազատուին կառավարիչներն, պաշտօնէից, խոհարարներն, լոմի լուացողներն, մանրավաճառներն և այլ նմանեաց դասերէ մանուկներ։ Ասոնք ոչ միայն կը զրկուին ուսման առիթէն, այլ և իրենց ծնողքն ալ կը զրկուին իրենց զաւակներուն ծառայութենէն, որոնք ուրիշ տեղ մը կրնան գտնել իրենց համար աւելի շահաւէտ։ Աս

ՊԱՐՄԿԱՍՏԱՆԻ ՀԱՑԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԳԱՂԹԱԿԱՆ ՃԻԿՂԵՐ Ի ՀՆԴԿԱՍՏԱՆ ԵՒԼՆ.

(Շար. 8րդ բիւեղ եւ վերջ)

Առ ձեռն լինելով մեզ Գրիգորիսի տակաւին չհրատարակեալ կենսագրութիւնն, ընդ աչօք անցուցի քանի մի էջերն և անհնարինս տրամեցայ։ Սոյն կենսագրութիւնն կներկայացնի նաեւ հարատամ պատկերը մի անցեալ ցաւալի երկպառակութեանն Հնդկահայոց՝ պատճառաւ նոյն իսկ Գրիգորիսի, վիճդեռ էջմիածնայ նուիրակութեան պաշտօնիւ կը չրջէր Հնդկաստանումն։ Հետաքրքիր ընթերցողաց ուշադրութիւնն կրհրաւիրեմք նաեւ այն ժամանակայ աղգային լրագրոց և վիմագրեալ տետրակաց և անշուշտ բացակայ աղգասէրք նոցանով յաւէտ պարզապէս կարող կը լինեն ենթադրել թէ Հնդկահայերն որքա՞ն պէտս ունեն Գրիգորիսի պէս առաջնորդաց։

Փոքր մատենագրութեամբ կարգացողն «Մանկավարժանոց» ի յօդուածն, պարզապէս կը նշմարի դի Պ. Դուլամիրեանց ըստ ամենայնի անծանօթ է Հնդկահայերի ո եւ իսկ վիճակագրական տեղեկութիւններին, մանաւանդ և դի այցելու եղած չէ մեր կողմերն և անշուշտ իւր ծանօթութիւնները պիտի առած լինի անհատատարիմ աղբիւրներից, ուստի յուսամք կը ների մեզ և անբաւակը կը կացուցանի եթէ իւր հրատարակութիւնն ի բաց թողնեմք, և կցեմք ի տարեւ չնչագրատ դատ ցտեղ մի յոյց տալով Հնդկահայերի բովանդակ թիւը և ապա մեր հատուցօտ ծանօթութիւնն եւս յերեւան ածեմք։

Հնդկաստանի, Բիրմանիոյ, Մալաքայի և Ճավայի Հայ բնակիչներուն բովանդակ թիւն։

ՀՆԴԿԱՍՏԱՆ. — *Բոմբայ — Թիւը տանց 10, Թիւը արուաց 20, Թիւը իգաց 25, գումար երկու սեռից 45։ Սուրատ. — Հնդկաստանի հին հայաբնակ քաղաքների մին, սակայն այժմ Թափուր ի ժողովրդոց գտանի կիսաւեր եկեղեցի մի։ Մատրաս — Թիւը տանց 11, Թիւը արուաց 30, Թիւը իգաց 35, գումար երկու սեռից 65։ Գուլայիեր — (Որպէս Սուրատ)։*

ԲԱՆԳԱԼԱ. — *Կալկաթա — Թիւը տանց 134, Թիւը արուաց 402, Թիւը իգաց 470, գումար երկու սեռից 872։ Դաքա — Թիւը տանց 22, Թիւը արուաց 48, Թիւ իգաց 50, գումար երկու սեռից 98։ Սէյդաբատ — (Որպէս Սուրատ)։ Զիչրա — Թիւը տանց 2, Թիւը ար. 3, Թիւը իգ. 4, գումար երկու սեռից 7։*

ԲԻՐՄԱՑ. — *Ռանգուն — Թ. տանց 25, Թ. ար. 75, Թ. իգ. 75, գումար երկու սեռից 150։ Մանդլէ — Թ. տանց 10, Թ. ար. 22, Թ. իգ. 34, գումար երկու սեռից 56։*

ՄԱԼԱՂԱ. — *Պինանգ — Թ. տանց 2, Թ. ար. 6, Թ. իգ. 4, Թիւ երկուց սեռից 10։ Սինգափուռ — Թիւը տանց 10, Թ. ար. 24, Թ. իգ. 30, գումար երկուց սեռից 54։*

ՃԱՎԱ.—*Բատաւիա — Թիւը տանց 11, Թ. ար. 25, Թ. իգ. 28, գումար երկուց սեռից 53։ Սուրբայեա — Թ. տանց 6, Թ. ար. 30, Թ. իգ. 20, գումար երկուց սեռից 50։ Սամարանգ — Թ. տանց 3, Թ. ար. 9, Թ. իգ. 11, գումար երկուց սեռից 20։*

Բովանդակ Թիւը տանց 246, Թիւը ար. 694, Թիւը իգ. 786, գումար երկուց սեռից 1,480։

Սոյն աշնան տերեւների պէս սրփռեալ հայերն Թէ ի Հնդկաստան, Մալաքա, Բիրմայ և Ճավա, որք են կամ գաղթականները ի Նոր Զուղայէն և կամ Ծնունդք գաղթականաց ի Պարսկահայոց՝ սահպեցան դիմել ասա երկար տարիքներով յառաջ քան զԳիւտ Գլխոյն Բարեյուսոյ ի Վառկայ Դի Գամայ, անշուշտ և սոյն գաղթականութիւնն կ'կրի Թուական մի երկար միջոցներով յառաջ քան Թէ ո եւ իցէ Եւրոպական Ազանց իչխանութիւնն Արեւելքում։

ԲՈՄԲԱՑ։ *Ցետ նուաղելոյ Հայոց Սուրատայ, զօրացան Բոմբայի Հայերն և առժամանակ մի վաճառականութեամբ յառաջադիմութեան քայլերը արձակեցին, որ և կառուցին եկեղեցի մի Ս. Պետրոս անուամբ, սակայն փոքր առ փոքր նուազելով՝ հազիւ հազ կը գտանուին այժմ 45 չունչ անուամբ և եթէ հայերը Անգղիերէնալեզու։ Եկեղեցին ունի մատնաւոր կալուածները, բարեյիշատակ աղայներից կտակեալ, որոց մատքերն կը ծախսուին Քահանայի և կարոտաւոր ժողովրդների վրայ։*

ՄԱՏՐԱՍ որ երբեմն փառաւոր պարծանօք կը պարունակէր իւր ծոցումն ճոխ ու փարթամ հայ վաճառականները, անուանի արհեստաւորները, երեւելի պալատականները, այժմ կը ծայ փառազուրկ և նուազեալ միանգամայն և անվսեմար։

Այժմեան տեղւոյս Հայերն, խիստ մի Թշուառ մասն կկազմեն անցեալ փառաւոր բնակիչների, և ըստ մեծի մասին Թոշակաւոր են տեղւոյ Որբոց տնդկի և եկեղեցւոյն որոց միացեալ դրամագլուխն կ'անցանի քան զ800,000 ֆրանգս, կտակեալ ի բարեյիշատակ աղայներէ։ Անցեալ տարի փետր. ամսումն երբ չրջագայութեամբ կրգըտնուէինք ասա՝ Պ. Ծատուրն, մի ի հին աւուրց ծերունեաց և ականատես վրկայից անցեալ փառաւոր հանգամանաց հայկազունեաց ասա՝ ցաւ ի սիրտ պատմեաց մեզ առ այն դի եթէ ապրուստ սա ազգայնոց չիցեր կախեալ ի տնդկէ Որբոց և եկեղեցւոյ հատատութիւններէն, չկայր երկբայութիւն դի առժամայն ունէին դառնալ ի կրօնէ և անշուշտ ուրանալ զազգութիւն իւրեանց։

ԿԱԼԿԱԹԱ կամ ԲԱՆԳԱԼԱ։ *Ասա հայազգի բնակիչներն նշանաւոր են իւրեանց խիստ հատատարիմ մնալովքն հայկական աչալուրջ ու աշխատասէր յատկութիւններին։ Մեծագոյն մասն զբաղած են տէրութեան բարձր պաշտօններով և չատոնք կը ծառայեն առատական արհեստների, անշուշտ և նշանաւոր տեղ մի կը բռնեն Բանգալայ Եւրոպացւոց հատարակութեան ընկերակցութիւններում, ոակայն յաւալի է զի ատա եւս ազգատիրական ոգին եթէ միանգամայն չիչեալ չէ, գէթ ցամաքեալ համարելի է։*

Բանգալայ հայերն մի մեծ ճնաս կրեցին նաեւ անցեալ ազգակործան երկպառակութենէն, պատճառաւ Տ. Գրիգորիսի, այն ինչ էջմիածնայ նուիրակութեան պաշտօնիւ ներկայ կը գտնուէր Կալկաթայումն. յառաջ քան ոյն հովուական այցելութիւնն, գըրեթէ տակաւին չէր ցամաքեալ ազգային սէրն ու կարեկցութիւնն առատանօր, իսկ ընորհիւ Տէր Գրիգորիսի ոչ միայն խանգարեցաւ Հնդկահայոց խաղաղութիւնն այլ և իւր անեպիսկոպոսավայել ընթացք առիթ եղեւ Թուլանալոյ նոցա ի կրօնէ։ Մեք ոյն ժամանակումն ներկայ էինք Կալկաթայումն և անշուշտ ոյն ցաւալի երկպառակութեանն ականատես և ականջալուր վկայ, յաւէտ չերկարելոյ նպատակաւ մեր վշտացուցիչ առարկայ, կդադարեմք ի ատոր և ի թղթոց մերմէն(1) ի բաց Տէր Գրիգորիսի ի Կալկաթայէ, և կմտոնեմք ճչմարտասիրաց դատաստանին՝ վճռել Թէ Հնդկաստան որչա՞փ պէտս ունի Տէր Գրիգորիսի պէս առաջնորդայ, անշուշտ Պ. Դուլամիրեանց անծանօթ է զի Հնդկահայերն առհասարակ ուսեալ և կրթեալ գոլով անդբսոին ի մանկութենէ, ոչ Թէ միայն ամենայն մատամբ կդերազանցեն Ռուսահայոց վարդապետներին, մանաւանդ և էջմիածնայ Գրիգորիսի պէս եպիսկոպոսայ, այլ և անկարօտ են նոցա առաջնորդութեանն իսկ։

Աստ նշանաւոր է Հայոց Մարդասիրական ճեմարանն, հաստատեալ ի 1821 ամի իբր 400,000 ֆր. դրամագլխով, սակայն նախատելի է իւր անկարգ կառավարչութեամբն։

Աստ կառուցեալ է իբր հարիւր ամօք յառաջ Նաղարէթ անունով Հայկական Հոյակապ եկեղեցին, ունի իբր 2,000,000 ֆրանգաց արժողութեամբ անչարժ և չարժական ստացուածք, որոց եկեւմտական համարն խիստ լըռելեայն կընթանայ, մանաւանդ և անծանօթ իսկ է անտարբեր հատատրակութեանն։ Աստ չարունակ կգըտնուին երեք քահանայք . . .

ԲԻՐՄԱՆԻՈՑ *Հայերն իբր հիսուն ամօք յառաջ նորէն գաղթած են ատա ի Հնդկահայ գաղթականաց և նշանաւոր պաշտօններ կը վարէին Բրմայ տէրութեան իչխանութեան ներքոյ և առաջին կարգի պալատականները էին, սակայն երբ այս երկիրն եւս անցաւ Բրիտանական կառավարութեան ձեռն, հայոց յառաջադիմութիւնն և բաղդն եւս մարեցաւ։*

Այժմեան Հայերն գրեթէ առ պէս կգտնուին Բրմատանի երկու երեւելի քաղաքներումն, այն է Ռանգուն և Մանդլէ, ուր և կառուցեալ ունեն մէն մէն եկեղեցի։ Ռանգուն չարունակ կգտնուի ծխական քահանայ մի, որ ըստ սովորականին առաքուած է Ամենափրկիչ վանքէն, և կկառավարուի առատ ծխական

(1) Զենք ստացած այդ Թուղթ։

մատքերով, սակայն Մանդլէ քանի տարիէ ի վեր յեղափոխութեան ենթարկուած լինելով մնաւանդ և պատերազմի, անկարող են Հայերն առատօրէն մխիթարել իւրեանց քահանային, վատնորոյ և Գրիգորիսն եւս նոյա առանց քահանայի կը Թողու։ Մեք անցեալ տարի, Զատկական տօնին, Մանդլէ լինելով ականատես եղանք ժողովրդոյ չերմեռանդութեանն, որք խմբովին բանալով դեկեղեցին՝ անվրդով մտօք պատուեցին Փրկչական Յարութեան տօնն։

Ռանգունաբնակ Հայերն Թողեալ առևտրութեան գործին ծառայելոյ, ամանք եւս տէրութեան գործով ըզբաղուած են, սակայն Մանդլէ քաղաքի Հայ բնակիչներ մի միայն մասնաւոր առևտրական գործի կծառայեն։

ՄԱԼԱՂԱ. *Նախ քան Բրիտանական կառավարութիւնն ատա, Հայերն էին մի միայն ազգ քրիստոնէից գաղթական և անշուշտ կրօնի խրատութեամբ, տեղական երկրական կառավարութեան ժամանակումն կծառայէին մի միայն ի տուր և առս շահավաճառ գործառնութեանց, որով և մարթացան յոչղապէս կառուցանել երկու հոյակապ եկեղեցիներ, մինն Պինանգ քաղաքում և միւսն Սինգափուռում։ Առաջնոյ ժողովրդներն լինելով փարթամ վաճառականներ, մանաւանդ կալուածներ և կըղպակներ եւս կատած են իր մէջն։ Ջենաւոր հաստատութեան նպատակով, որոյ մտքերն այժմ լիապէս կը բաւեն քահանայի ռոճկին և այլ մասնաւոր ծախքեր եւս հոգալու։ Իսկ Սինգափուռայ եկեղեցին կկառավարուի մի միայն ժողովրդոյ առատ տուրքերով։ Սոյն կղզւոյ հայերն այժմ ընդհանրապէս կպարապեն վաճառականութեամբ։ Տեղւոյս ազգայնոց հիւրընկալական սէրն ու կարեկցութիւնն առ միմեանս և առ օտարականս յիրաւի ամենայն մասամբ գովեստից արժանի են։*

ՃԱՎԱ. *Ճավահայերն Հին Զուղայէն ի Նոր Զուղա՝ գաղթականաց՝ նորէն գաղթեալ կմնան հարիւր տարէ ի վեր Ճավայի երեք երեւելի քաղաքներումն այն է ի մայրաքաղաքն Բատաւիա, Սուրբայեա և Սամարանգ, պարապելով մի միայն ի տուր և առս չահավաճառութեան։ Թէպէտ Հայոց բախան հակառակ բայց հանճարն յաջողակ, առատ և հզօր կարողութեամբ միշտ ականատես եղած են գործունէութեամբ Եւրոպական ազգաց մօտ։ Կան այլ եւս մանաւանդ Հայեր ի Զրիբօն, Թգալ, Բանիւմաս, Զպարայ և Բալի, սակայն խուլ ու խաւար կացութեամբ։ Բատաւիոյ Հայերն խիստ յաջող և ամանք նահանձելի վիճակում կգտնուին և նշանաւոր են վաճառականութեամբ, մանաւանդ պատուական ազգասէր Պ. Յովհաննիսեան՝ որոյ բնակութեան տեղին է արքունի գաշտն, մի չքեղ հոյակապ պալատում։*

Ասա օր աւուր ազգային սէրն ու կարեկցութիւնն կպակի, վասն զի նոր

աերունդն Հոլանդալեղու՝ ազգային բովանդակ ծիսերն ու արարողութիւնն կարհամարհի, և իւրաքանչիւր ոք կը ջանայ եթէ կարելի է Հոլանդացուցանել զինքն, սակայն չի յաջողիր, վասն զի Հոլանդացիք և Եւրոպացիք առհասարակ (թէ նախապաշարութեամբ և թէ այլ ինչ առթիւ չգիտեմք) միշտ խոշոր աչօք կ'նային մեր Հայկական խմբին, մանաւանդ զի բնաւ երբէք թոյլ չտան իւրեանց ընկերակցութեան մէջն գտանուելու, ուստի ի ներքոյ այսօրինակ հանգամանաց տեղւոյս փոքրիկ հայկական խմբի ջանքերն չեն յաջողիր իւրեանց ազգութիւնն ուրանալու, թէպէտ և առհասարակ, կրօնական մասին ատն, թոյլ և անտարբեր կ'ինան։ Զատիկ օրիորդները կ'ջանան իւրեանց հօր խիստ խնայողութեամբ դիզած փարիզեցիութեան կարողութիւնով՝ Հոլանդացւոց հետ առանանալ, զո՛վ ուս կ'ինի՝ թէ ու ի վերջին կարգի մարգիկներէն, չկայ փոյթ, միայն թէ փեսայն Հոլանդացի լինիցի. զնոյն ուս կ'ջանան մեր մանչերն, և երբեմն ուս կ'յաջողին իւրեանց նիւթական կարողութեամբն, սակայն այն ինչ տակաւին բաց է դուռն Գարսկահայոց գաղթականութեան՝ ձավայի հայերն 20 տարուընչ չեն պակսիլ, թէեւ ազգութեան եռանդն և ոգին մարած կ'լինի։

Իբր գոհ և հինգ ամօք յառաջ տատ կ'նակուէին երկոքին հարազատ քոյրքն Տիկին Մարիամ Ճակոբ Ճարութիւնեան և Օրիորդ Թագուհի Մանուկեան, բարերարուհիք ձավահայոց, որք և վանք ազգասիրութեամբ ծնան յաչխարհի երեքին հայ ազգային հաստատութիւնները, որք են «Մ. Ճավհանու եկեղեցին, Հայկեան Մարանութիւնն ձավայի, և Մանուկ և Ճարութիւնեան դպրոցն» որ և յետ մահուան սոյն հաստատութեանցն թողին իւրեանց ճոխ ստացուածոց և անշարժ կալուածոց մի միայն օրինօք ժառանգք։ Սոյնն ազգասիրութեան օրինակին հետեւեալ նաեւ Համազուսլալ ազգասէր Պրն. Մանուկ Ճորգանանեան. բայ ի սոյանէ Ճեայեալ հայերն ձավայի, մի նշանաւոր ազգօգուտ գործ չեն ունեցեալ յիշատակութեան արժանի։

Ի Բատաւիա չարունակ կ'ապրի հայ քահանայ մի Ամենափրկչեան Աթոռէն նշանակուած, որոյ ամսական ռոճիկը կ'վճարուի մի միայն յարդեանց կտակեալ ստացուածոց վերայիչեալ երկոքին քերց, բարերարուհեայ ձավահայոց. անշուշտ եթէ սոյն երջանկայիշատակ բարերարուհիք՝ չէին այսպիսի հետաքրքրութեամբ կտակած և կ'եղեալ մշտնջենաւոր հաստատութեան համար, անտարակոյս ձավահայերն պիտի առանց վկրտութեան թողնէին իւրեանց զաւակներն և իւրեանք եւս առանց քահանայի տպրպարուէին հող։ Ցիրաւի ցաւալի է ձավահայերն այժմեան անշուք դրութիւնն, մանաւանդ իւրեանց զգալի կղանակաւ միմեանց ընկերակցութենէ զրկ կ'լինելն, որ և տաքութեան աչօք կ'նայեն առ միմեանս։

Ի վերջոյ նկատելով մեր կիսկական հանգամանս ընդհանուր Հնդկահայոց և կշռեալ ընդ խորհրդատրեալ առաջնորդութեան կամ յաջորդութեան սոյն ազգայնոց ի Պրն. Դուլամիրեանց, ըստ մեր կարծեաց անօգուտ և ձնասակար համարելի է այդ, որպէս և Տ. Գրիգորիս առաջնորդի հովուական այցելութեամբն փոքձ առեալ եմք, ուստի ի ներքոյ սոյն հանգամանաց բաւական և մանաւանդ անվնաս իակ՝ համարելի է առաքումն ի Հնդիկս, հմուտ Աստուածաբան վարդապետի մի կամ ի Կոստանդնուպօլսոյ Աթոռէն և կամ յերուսաղէմայ Պատրիարքարանէն ի քարոզութիւն Հնդկահայոց առհասարակ, վասն զի փորձով դիտեմք զի էջմիածնայ արծաթածարաւ վարդապետներ և եպիսկոպոսներ անընդունակ են այս պաշտօնին և ըստ սովորութեան յաւել պատճառ կ'լինեն ձնասուց քան թէ օգտակարութեանց։

ՍԱԿԻՏ

Ռումանիայի եւ Պուլկարիայի Հայերի Առաջնորդներն

Արեւելք կը գրէ թէ Դեր. Խորէն Արքեպիսկոպոս Նարպէյ-Լուսինեան խնդրեր է Պատրիարքարանէն ջնջել իւր անուն Կարինի առաջնորդական ընտրելիների ցանկէն, յայտնելով թէ ինք արդէն Ռումանիայի Առաջնորդ ընտրուած է որի համար բանակցութեան մէջ է Ռումանիայի հայ ազգային իշխանութեան հետ։

—Վառնայի Հայեր իրենց անհովիւ ձնացած լինելը և Առաջնորդի պէտք ունենալնին իմացուցած էին Կ. Պոլսի Պատրիարքարանին։ Կրօնական ժողովը օգոստ. 24/5 սեպտ. նաստն մէջ որոշեր է ծանուցանել Պուլկարիայի Առաջնորդ Ռուսճուգլեան Գեր. Գէորգ վարդապետին որ ժամ յառաջ ճանբայ ելնէ Պուլկարիա երթալու համար։

Ի. Կ. ԱՁՎԱԶՈՎՍԿՈՒ ՅՕԲԵԼԵԱՆԸ

«Մշակի» Նո. 89ի մէջ տպված գեղեցիկ նամակից ընթերցողը լսած կ'լինի արդէն, որ ներկայ թուի սեպտեմբերի 27ին ծնվելու է Պետերբուրգի գեղարուեստների ճեմարանում մեր աշխարհահռչակ նկարիչ Յովհաննէս Այվազովսկու յիսնամեայ յոբելեանը։

Այվազովսկի պրիսի հայ է և հարազատ եղբայր հանգուցեալ Գաբրիել Եպիսկոպոս Այվազովսկու։ Մնվելով Ղրիմում և բնածին ընդունակութիւն ունենալով դէպի նկարչութիւնը, Այվազովսկի ամենափոքր հասակից արդէն կանում էր նկարել ծովը, որի վրայ տեսարանը իր մատաղ հասակից անդադար աչքի առջեւ ունենալով, նա հետզհետէ զարդացրեց իր հանճարը այդ բնական տարրի ներդրծութեան տակ։ Ծովեզրեայ երկրի զաւակ, Այվազովսկի որպէս նկարիչ՝ ծովի նկարիչ (մարինիստ) դարձաւ։ Նա ունի թէեւ գեղեցիկ նկարներ, որտեղ ծովը ներկայացրած չէ, բայց նրա այն պատկերները, որոնց վրայ ծով կայ, — աննման են։ Նա ներկայացնում է ծովը գլխաւորապէս մրրկալի, փոթորկալի դրութեան մէջ և դուցէ աշխարհիս երեսին ոչ մի նկարիչ չէ հասել այն ձիրքին, որին հասել է մեր նկարիչը՝ ծովի ջրի բնական թափանցկութիւնը ներկայացընելու։ Ցիսուն տարի է արդէն որ Այվազովսկի, ծովի այդ սիրահարը, նկարում է և նրա նկարներին թիւ չը կայ։ Շատ քիչ է պատահում տեսնել մի նկարչին, որ Այվազովսկու պէս չուտ նկարէր. ամենից նկարը նրա հանճարեղ վրձինի տակից պատրաստ է դուրս գալիս մի օրում, մի քանի ժամում։

Զարմանալի երեւոյթ. մինչդեռ հայոց ազգութիւնը մինչեւ այժմ չէ արդիւնաբերել գիտութեան և գեղարուեստի առաջարիզում ճշմարիտ աշխարհահռչակ, համաշխարհային հանճարներ, նոյն ազգութիւնը արդիւնաբերել է մի նկարչին, որի հանճարը յայտնի է ամբողջ աշխարհի բոլոր քաղաքակիրթ երկիրներում։

Այդ է պատճառը որ Այվազովսկու յոբելեանի տօնելը ոչ թէ միայն հայերին է պատկանում, մինչեւ անգամ ոչ թէ միայն համառուսական է, այլ այդ յոբելեանը տիեզերական, համաշխարհային տօնախմբութեան բնաւորութիւն կունենայ, որովհետեւ Այվազովսկու վրձինը յայտնի է ոչ թէ միայն իր հայրենակիցների և ամբողջ Ռուսաստանի մէջ, բայց և ամբողջ աշխարհում։

Եւ մինչեւ որ սեպտեմբերի 27ին, ինչպէս և ասում է Պետերբուրգի մեր յարգելի թղթակիցը, կը տօնվի Այվազովսկու յոբելեանը ամենափառաւոր կերպով, մինչեւ որ Ռուսաստանի և եւրոպական երկիրների ամեն ծայրերից կուզարկվեն մեր հռչակաւոր յոբելեարին անթիւ հեռագիրները, ուղերձները և պարգեւները, մենք, հայերս էլ, չը պէտք է անտարբեր ձնանք դէպի այնպիսի տօնախմբութիւն, որի հեղինակը, ինչպէս ասում է Պետերբուրգի հայերի ուղերձը՝ մեր մարմինն ու արիւնն է . . .

Ցանկալի է որ Անդրկովկասեան հայոց հասարակութիւնը մասնակցեր սեպտեմբերի 27ի տօնախմբութեան, ցանկալի է որ մեր երկրի հայարնակ քաղաքներն էլ, ինչպէս Թիֆլիս, Երեւան, Բագու և այլն ողջունէին իրանց կողմից, կամ առանձին յանձնաժողովների, կամ քաղաքային դումայի միջնորդութեամբ Այվազովսկու փառաւոր գեղարուեստական գործունէութեան յիսուն տարվայ լրանալը։

Գ. Ա.

(ՄՇԱԿ)

ՌՈՓԱՑԻ ՊԱՏԿԱՆԱՆԱՆ

Մեծանուն բանաստեղծն Գամառ Բաթիպա օգոստ. 26/7 սեպտ.ին մեկներ է Կ. Պոլսէն իւր հայրենիք Նոր Նախիջեւան վերադառնալու համար։ Թէեւ փափագ ունէր Իզմիր եւս այցելել, ինչպէս նաեւ Թիւրքահայաստանի մի քանի քաղաքներն, բայց որովհետեւ լինք Նոր Նախիջեւանի քաղաքային արհեստական վարժարանի տեսուչն է և վարժարանի վերաբացման ժամանակին հասած լինելով իւր ներկայութիւն անհրաժեշտ է այնտեղ, փութացած է վերադառնալ Նոր Նախիջեւան։

Գամառ-Քաթիպան շատ լաւ սպասուրութիւններ թողած է Կ. Պոլսի մէջ։

Ասպետուհի Տիկին Նեկտար Ջունդ

Վեհ. Սուլթանը բարեհաճեր է Եֆթաղաթի Դ կարգի պատուանշան տալ աւստրիական Հպատակ անուանի հայ վաճառականներէն Վսեմ Ջունդ Ասպետի հնոջ Աղնաւաչուք Տիկին Ջունդ Ասպետուհուն։ Տիկին Նեկտար Ջունդ անծանօթ չէ նաեւ ազգային ասպարիզին մէջ. անդամ է Ազգանուէր Հայրենեաց ընկերութեան որի յառաջդիմութեան եռանդով կաշխատի և որի առենապետութեան պաշտօնն վարած է տարիներով։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շնորհակալութեամբ առացանք Վենետիկի Մխիթարեան Պատ. Միաբանութեան հրատարակած Բազմավիպ այս տարու Բ եռամսեայ պրակը որի բովանդակութիւնն է հետեւեալը.

Հանդէս Հայկական. — Քննադատութիւն Թղթոյն Մ. Խորենացւոյ առ Սահակ Արծրունի, և Պատկերի Տիրամօրն ի Հոգեաց Վանս։ — Ճանապարհորդութիւն ի Թէոդոսիոյ դէպի Նոր-Նախիջեւան.—Հետախուզութիւնք Օսրոյենէ թագաւորութեան պատմութեան վրայ, յԱվփերեանց Յոն Գուաշմիզ.—Աւազ (Ոսկեփորիկ). —Վարդանայ Վարդապետի Աչխարհացոյց ամենայն Տիեզերաց.—Հանդէս Ռուսումնական— Տարերք կենդանաբանութեան (պատկերօք).—Վէնեաիկ—Ազգային աշխարհահանդէս գեղարուեստից (պատկերազարդ).—Թուչելու մեքենայ.—Անուանակոչութիւն անգործարանաւոր տարերաբանութեան և նշանացոյցք.— Մթնոլորտային փոշի։

Նոյնպէս առացանք Վիէննայի Մխիթարեան Պատ. Միաբանութեան հրատարակած Հանդէս ամսօրեայի սեպտեմբերի թիւը որի բովանդակութիւնն է հետեւեալը.

Մխիթարեան աբբահարք Միճիտիէ շրանշանիւ պատուեալ. — Քաղաքագիտական. Այլ և այլ վիճակք կամ դասակարգք մարդկային ընկերութեան.—Բանասիրական. — Նորագոյն հայերէն լեզուն. — Գրական —Հանդէս մրցանակաբաշխութեան Իզմիրեանց կտակին. — Տր. Յովհաննէս Հանուչ. — Դպրոցական. — Քննութիւնք Վիէննայի Մխիթ. վարժարանի ի Փանկալդի Կ. Պոլսոյ. —Յանձնելի դասագիրք.—Պատմական նորավիպ. Գաւեոսիլիա.—Նորայուրք.— Տնտեսական.— Մանրայուրք.—Քաղաքական տեսութիւն։

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Ալմանիա մերժած է Դրան առաջարկած պաշտօնը որ է Պուլկարական խնդրին համար միջնորդել պետութիւններին քով։

—Երէքշաբթի օր, Պ. Քարավէլոֆի հրատարակած մէկ յօդուածին

պատճառով որով ապօրինաւոր կըհամարէր Ֆէրամինանա իշխանի ընտրութիւնը, ժողովուրդը գրգռուեր և մի միթինկ գումարեր է այդ յօդուածի դէմ բողոքելու համար, 1,300 ցոյցարարներ դնացեր կոտրեր են Պ. Ֆարավէլոֆի տան և լրագրի տպարանին ապակիները. Ա. յնուհետև իշխանին պալատը և Պ. Սթամպուլոֆի տան առջեւ երթալով համակրական ցոյցեր արեր են։

—Պ. Բատոսլավոֆ և իւր ընկերները բանտէն արձակուեր են իշխանին հրամանով։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Ալմանիայի Վիլհելմ կայսրը Սթէթին հասած է։ Մի հեռագրի նայելով, Ռուսիայի Զարն ալ Քոբէնհակէն Սթէթին անցած կը լինի այսօր առաւսկեղու համար։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ԵՐԱՍԽ

Պատկերազարդ ճաճղ.ս

Պետերբուրգում ներկայ տարուայ Հոկտեմբեր և Դեկտեմբեր ամիսներում հրատարակուելի։

Ամեն մի գիրքը բաղկանալու է մօտաւորապէս 200 երեսից ոչ աւելի գիրքով։ Տպագրութիւնն, թուղթը և նկարները լինելու են չքեղ։ Բաժանորդագինն է 3 րուբլի։

ԵՐԱՍԽը խմբագրվում է գործին տեղեակ անձերից հետեւեալ ձեւով։

Ամենակենդանական նշանակութիւն ունեցող հատորական խնդիրներ. վէպիներ. վիպասանութիւններ. կենսագրական նիւթեր. ճանապարհորդութիւններ. տեղագրական, աշխարհագրական և ժողովրդական գրութիւններ. բանաստեղծութիւններ, թատրոնական գրուածքներ. կրիտիկա, մտաւորագրութիւն. գիտական յօդուածներ գիւրամատչելի լեզուով ու իմաստով. թղթակցութիւններ, մանաւորապէս օտարերկրեայ հայերի կեանքից. հայ և եւրոպական գրականութիւն ու նոցա ներկայացուցիչները. քաղաքական տեսութիւն. լրագրոյց չորքը. քրոնիկա. ազգային յիշատակարան. լուրեր. յայտարարութիւններ։

Հանդիսին մասնակցում են և օտարերկրեայ անուանի հայ գրագէտները։

«Երասխ»ի վերաբերեալ ամենայն դործերի մասին պէտք է դիմել Միհէօն Դալամիրեանցին հետեւեալ հասցէով։

St. Pétersbourg. S. Goulamiriantz. Poste Restante.

COMITÉ DES CONCOURS POÉTIQUES
DU MIDI DE LA FRANCE

Anciens concours poétiques de Bordeaux

APPEL AUX POÈTES

Le trente-neuvième concours poétique ouvert en France le 15 Août 1887, sera clos le 1er Décembre 1887. Vingt médailles, or, argent, bronze seront décernées.

Demander le programme, qui est envoyé *franco*, à M. Evariste CARRANCE, président du Comité, 6, rue du Saumon, à Agen, Lot-et-Garonne. — Affranchir.

CONTES GRIVOIS
Par ÉVARISTE CARRANCE

Un petit volume in-18 ; prix **0,50** centimes.

Si vous voulez rire à vous tordre, achetez les CONTES GRIVOIS. Il y a dans ces pages légères une gaieté inextinguible, un parfum rabelaisien qui s'associe aux mets épicés qu'adoraient les disciples d'Epicure Il faut lire et relire : *La voix d'en haut Les grands pendards, La soupe du proviseur, Les baisers rendus* et *La tournée de Monseigneur.*

Adresser, pour recevoir le petit volume franco, 0,50 cent. à M. le Directeur de la *Revue Française*, à Agen.

BIBLIOGRAPHIE

L'AVENIR DE NOS ENFANTS, par Elysée Reclus. Prix franco : 10 centimes. En vente à la *Librairie des Deux-Mondes*. Paris, 17. rue de Loos, X^e^ arrondissement.

Cette page éloquente du grand penseur socialiste est une des plus belles qui aient été écrites contre l'asservissement dont l'enfance est victime.

L'humanité du lendemain dépend toujours de l'état dans lequel ont évolué les jeunes générations de la veille.

Conclusion de l'auteur : « Apprenons à les élever de manière à les développer dans la santé physique et morale la plus parfaite. » Nous voudrions voir cette intéressante brochure entre les mains de tous ceux de nos amis qui s'occupent des questions sociales en général et particulièrement des questions d'enseignement.

ԾԱԽՈՒՐ ԳԻՐՔԵՐ

Ամերիկիայի խմբագրատունը ծախու կը գտնուին հետեւեալ գիրքերը ստորագրեալ հեղինակներէն ինքնագիր նամակներով կը պահուին ուզողներին, փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։ Մատակը կանխիկ չվճարուած գիրք չղրկուիր։ Կարելի է ամէն պրկել մանաւանդ փոստով կամ ֆրանսական նամակադրոշմներով (timbres-poste)։ Նոյնպէս և ամերիկեան ոսկւոյ թղթադրամով (1 ոսկւոյը 5 ֆրանգի հաշուով)։

1. ՐԱՖՖԻ—ԿԱՅԾԵՐ. Ա և Բ հատորներ.

Ազգային վիպագիր Պրն. Րաֆֆիի դործերին մէջ առաջին տեղը կը դրաւեն ԿԱՅԾԵՐը. Այս գիրքը կը ծանօթացնէ ընթերցողը տաճկական և պարսկական Հայաստանի գլխաւոր տեղերին հետ, հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կուտայ քուրդերի ընտանեաց ցեղերի և հայերի դրութեան, վաքքի և բարքի մասին նա ցոյց կը տայ այն ծրագիրը որին պէտք է հետեւին Հայաստանի մէջ դործել ուզողներ. Մի խօսքով, թէ իրր ազգային ընտիր վիպասանութիւն և թէ իրր հայրենասիրական դործունէութեան վարդապետարան և ծրագիր, արժան է որ դանուի այս գիրքը ամեն հայրենասէր Հայի տունն։

Գինն Ա. հատորին 7 ֆր. Բ հատորին 8 ֆր. և 50 սանթիմ։ Երկու հատորներն միասին դնողին 15 ֆր.։

2. ՐԱՖՖԻ—ՓՈՒՆՋ. Ա և Բ հատորներ (Ա. հատորը կը պարունակէ Րաֆֆիի ամենաւոր բանաստեղծութիւններն և Բ հատորն իւր գրած մի քանի վէպերն)։ Երկու հատորներն միասին 10 ֆր. և 50 սանթիմ։

4. ԴԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ — ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ. (Ազգային առաջնակարգ բանաստեղծ Ռ. Պատկանեանցի ապաստաղնէ և հրատարակիչ բանաստեղծութիւններն կը պարունակէ. սկիզբն դրուած է հեղինակին պատկերը)։ 2 ֆր.

5. ԴԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ—ԱԶԱՏ ԵՐԳԵՐ. (Դամառ-Քաթիպայի «բանաստեղծութիւնները»էն Ազատ երգերի մասը առանձին տետրակով տպագրուած), 20 սանթիմ։

6. ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ — ՎԱՆԳՈՑԻ. (Ամեն. Խրիմեան Սրբազանի գրած պատմական, խորատական և աղատասիրական տետրակը 1876ի վանի հրդեհին նկատմամբ)։ 70 սանթիմ։

7. Գ. ԱՐՈՎԵԱՆՑ — ՀԱՅՈՑ ԱԶԳԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. (Ամեն Հայի համար անհրաժեշտ պարտք է իմանալ իւր ազգի պատմութիւնը, դիտենալ թէ ինչպէս սկսեր է իւր ազգ, ո՛րտեղ ունեցեր է իւր հայրենիք, ինչպէս եկեր հասեր է մեր օրերը, ո՛րտեղ և ինչ պատճառներ եղեր են իւր թշուառութեան պատճառները և այլն։ Գէորգ Աբովեանց որ Ծիրիսի ներսիսեան վարժարանին մէջ Հայոց պատմութեան ուսուցիչ էր և որ յանկարծ մի օր, չդիտցուիր ինչ կերպով, անյայտացած է, իւր ատենդած դասերի համառօտութիւնը գրի վրայ առ փոխած և թողած էր։ Այդ «Համառօտութիւն Հայոց ազգի պատմութեան»ը որ մինչեւ այժմ երրորդ տպագրութեան արժանացած է, ի սկզբան կուտայ տեղեկութիւններ Հայաստանի հին աշխարհագրութեան վերաբերեալ և պատմութիւնն ալ այնպիսի ոճով կանէ որ չներկայացուներ միայն թագաւորների կռիւները, այլ և կը պատկերացուներ հայ ժողովրդի վիճակը)։ 2 ֆր.

8. ԳԱՖՐԻԷԼ ՆՊ. ԱՅՎԱԶԵԱՆ — ՆԻԿՈԼ ՆՊԻՍԿՈՊՈՍ (Պատմութիւն պարձին Հայկազանց Լեհաստանի և Կաթոլիկութիւն)։ 1 ֆրանգ

9. ԳԱԲՐԻԷԼ ՆՊ. ԱՅՎԱԶԵԱՆի գրած ԼՍԱՐԱՆ անուն հետեւեալ տետրակներն որոնք հոգեշահ պատմութիւններ և օգտակար տեղեկութիւններ կուտան, կը ծախուին իւրաքանչիւրը 35 սանթիմ

Ա. Պատմութիւն վարուց Մեծին Ներսէսի Հայրապետին մերոյ։

Բ. Եգիպտոսի հնութիւնները։

10. Ա. ՏԷՐ ՅԱԿՈՐԵԱՆ — ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ. (Պատկերազարդ ձեռնարկ աշխարհագրութեան). 2 ֆր.

11. ԵԶՆԻԿ ՔՀՆՑ. ԵՐԶՆԿԵԱՆՑ — ՁԱՑՆԱԴՐՈՒԹԻՒՆ, ԱԶԳԱՑԻՆ ԵՐԳԱՐԱՆ Հայ դպրոցների համար (Աւրժ. Տ. Եզնիկ քահանան որ Հայկական Համեստագրութեան ուսուցիչ է Ծիրիսի Ներսիսեան վարժարանին, 172 երեսներէ բաղկացած այս երգարանի մէջ ժողոված և հրատարակած է ազգային 104 երգեր, անոնց եղանակներն ալ ձայնադրելով հայկական նոտաներով)։ 2 ֆր. 80 սանթիմ)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

Ա. ՀԱՑ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (Եւրոպայի մէջ բնակած մի Հայի Հայաստանի վերայ տրած խորհրդածութիւններով կը սկսի և մի Անգլիացու բերնով կը պատմէ երեւանցի մի հայ աղջկան հատատատմութիւնը մահմետական կրօնը չընդունելու և իր հայ նշանածի հետ ամուսնանալու համար), 50 սանթիմ.

Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ (Հայ գիւղացիների բան վիճակը ոչ չատերին անծանօթ մնացած է, ուստի ծանօթացնելու պէտքը կը ներկայացնէ), 20 սանթիմ.

Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՑԵԼԻ (Հայաստանի պատմութեան ցանկացող մի Հայի մտորմունքներն և մտածումներն են Սաղմոսի ոճով գրուած), 40 սանթիմ։

ԼԵՒՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Կիլիկիոյ վերջին թագաւոր Լեւոն Լուսինեանի որ կը համարէ Փարիզ և Սէն-Տընի կեդեռամինեանց վանքին մէջ, չիրմին պատկերը կը գտնուի «Արմենիա»ի խմբագրատունը։ Շիրմին վրայ կայ, ստապանագրէն զատ, և Լեւոն թագաւորի արձանը։

Պատկերի գինն է 60 սանթիմ։ Խմբագրութիւնն կը վճարէ փոստի ծախքը։

ՀԱՑԸ եւ ՀԱՑԱՍՏԱՆԸ
ՕՏԱՐՆԵՐԻ ԱԶԴՈՒՄ

ՓՈՐՁի խմբագրապետ Մ.Ե.Ժ. Պրն. Աբգար Յակոբեանեանի կարգացած մի հրապարակական դասախօսութիւնն է Հայկական խնդրին նկատմամբ Թիֆլիսի ժողովարանին մէջ 1879 թ. մայիսի 17ին։ Կը ներկայացնէ Եւրոպացիների նկատողութիւնները Հայերի մասին և կը նպատակէ Լոնտոնի Անգլօ-Հայկական Միութեան մի տրած միջնին 1878 յունիսին, Հայկական խնդրին համար։ Կը ծախուի «Արմենիա»ի խմբագրատունն։ Գինն է 1 ֆր., փոստի ծախքը մեր վրայ։

ՏՆՕՐԻՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFANTIN.

ՄԱՐՍԷՅԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLER rue Vacon 50.